ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1952 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Վ. Հակոբյան

ԴԱՎԻԹ ՔՈՐԱՅՐԵՑՈՒ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Այն, ինչ հրապարակում ենք սույն հոդվածով, 12-րդ դարի ոչ-անհայտ անձնավորության՝ Դավիթ Քորայրեցու հիշատակարանն է, որը գտնվում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատան (Մատենադարան) № 5602 ժողովածուի 268բ—272բ էջերում[1]։ Հիշատակարանում որպես գրիչ հիշվում է Դավիթը, ամենայն հավանականությամբ Քորայրեցին։ Դավիթ Քորայրեցու անձնավորության մասին մեզ հասած մատենագրական տեղեկությունները ժլատ են և կցկտուր։ Դավիթը Քորայրեցի է կոչվել ոչ թե Զորագետի մոտ գտնվող Այգեհատ գյուղին կից Քորայր (վրաց. Քորեր) վանքում ճգնելու պատճառով, ինչպես սխալմամբ կարծում են ոմանք, այլ ծննդավայրի պատճառով, որ ճիշտ ենթադրել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը։ Այս ենթադրության իրավացիությունը հավաստում է 1281 թվականին ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանը, ուր կարդում ենք. «Գրեցաւ, որ է հանգիստ նորա ի գերահռչակ սուրբ ուխտն Հաղբատ և մականուն Քոբե(ր)ցի կոչեն, վասն ծնողաց անտի լինելոյ և նոյն ինքն անտի ծննդեամբ»[3]։

Ենթադրում են, որ Դ. Քորայրեցու ուսուցիչներն եղել են Պետրոս և Վարդան Հաղբատեցիները։ Պետրոս Հաղբատեցու մասին չեն կասկածում[4], սակայն հավաստի չէ պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկի երկմտությունը, թե արդյոք Դ. Քորայրեցին Վարդան Հաղբատեցու մոտ աշակերտել է[5]։ Այս խնդրի վրա լույս է սփռում առաջարկվող հիշատակարանի ուշագրավ հետևյալ վկայությունը, ուր Վարդան Հաղբատեցու մասին ասված է. «...ի վերջէ հանգիպեալ իմ միւսոյ իմաստացելոյ ի նոյն կրթութիւն... վերստին տեղեկացեալ իմ առ ի հաստատութիւն և ի լրումն առաջնոցն կրթութեանց, վստահ եղեալ հաւանութեամբ նորին...»։

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը կարծում է, թե Դ. Քորայրեցին մահացել է Լոռվա ժողովից առաջ, մինչև 1205 թ.[6], թեև այդ կարծիքը հակասում է Կ. Գանձակեցու վկայությանը։ Վերջինս թվելով Լոռվա ժողովի մասնակիցներին՝ հիշում է նաև «Դաւիթ Քորայրեցին ի Հաղբատայ»[7]։ Նշանակում է Դավիթ Քորայրեցին մահացել է 1205 թ. Լոռվա ժողովից հետո (այս ժողովը ոմանք դնում են 1208 թ. ներքո)։

---

[1] Ստորև բերում ենք Մատենադարանի № 5602 ձեռագրի համառոտ բիբլիոգրաֆիան. ձեռագիրը Դրիդոր Աստվածաբանի ճառերի մեկնությունն է, բաղկացած 272 թերթից, մեծությունը՝ 17×13. նյութը թուղթ, վիճակը վատ, սկզբից և վերջից թերի, կան ցեցակեր էջեր, միասյուն, գիրը՝ բոլորգիր, գրիչը՝ Դավիթ, ժամանակը 1178 թ., վայրը՝ անհայտ։ 1922, էջ 44։

[2] Պրոֆ. գոկ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց, Թբիլիսի, 1928, էջ 193 (վրացերեն)։

[3] Մ. Տեր-Մովսիսյանի ձեռագրերի ցուցակ, Հայկ. ՍՍՌ ԴԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գործ. № 4, էջ 294։

[4] «Երանելոյն Յովհաննու Ոսկերերանի մեկնութիւն Եսայեայ մարգարէի», Վենետիկ, 1880, էջ ժե։

[5] «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց», էջ 191։

[6] Նույն տեղում, էջ 193։

[7] Կ. Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 162։

Դ. Քոբայրեցին իր ժամանակի կրթված ու գիտուն մարդկանցից էր[1]: Նրան վերագրում են մեկ տասնյակից ավելի աշխատություններ, թեև պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը իրավացիորեն կասկածում է մի քանի աշխատությունների Դ. Քոբայրեցու հեղինակությունը լինելուն[2]:

Դավիթ Քոբայրեցու սույն հիշատակարանը բաղկացած է երկու մասից. առաջին մասը վերաբերում է Գր. Աստվածաբանի ճառերի մեկնության հանգամանքներին, իսկ երկրորդ մասը՝ վրաց ժողովրդի պատմության մի կարևոր եղելության՝ վրաց Գեորգի 3-րդ (1156—1184) թագավորի դեմ Օրբելիների գլխավորությամբ վրաց խոշոր ազնվականների դավադրության բավական մանրամասն նկարագրությանը, որը, սակայն, վերջից թերի է, ձեռագրից թերթերի կորչելու պատճառով:

Հայ պատմիչներից այս դեպքերին բավական մանրամասն անդրադարձել է Ստ. Օրբելյանը[4], իսկ Վարդան Արևելցին նշում է համառոտաբար[5]: Դ. Քոբայրեցու հիշատակարանում նկարագրված որոշ դեպքեր զարմանալի կերպով համապատասխանում են այդ եղելություններից մեկ դար և ավելի հետո ապրող հեղինակի, Ստ. Օրբելյանի վկայություններին, իսկ որոշ վկայություններ սրբագրում են վերջինիս տեղեկությունները և կամ այլ մանրամասնություններով լրացնում:

Օրբելիների կազմակերպած դավադրության ժամանակի մասին Դ. Քոբայրեցին իր հիշատակարանում հետևյալն է գրում. «Արդ՝ եղև շարադծութիւն այսր տառի (Գր. Աստվածաբանի ճառերի մեկնության № 5602 ձեռագիրը — Վ. Հ.) մեկնութեան յամի Ո-որդի և եւթան ու քսանիւ Թուաբերութեան հայ ազնեան քրոնիկոնիս, իսկ ներոյս շրջանի իննսնի և չորից և ի կենտրոնին մերոյ ծնընդենէ հազար և հարիւր եւթանասուն և ինն էին ամացն շրջագայութիւնք, իսկ Հռոմմին շրջանի չորեք հարիւր իննսուն և ութ էին բոլանդըականութիւնք ամաց: Նախկան զայս միով ամաւ խաւարեցաւ արեգակնն յապրիլիս ամսոյ, ի ներում կիւրակէին, յառաջնումն ժամու և նշանք յետ այսր ցուցան չփոթման» (խմա դավադրության — Վ. Հ.):

Այստեղ առաջանում է սխալ այն տպավորությունը, թե արևը խավարել է ժողովածուի գրությունից (հայոց 627 թվից) մեկ տարի առաջ, այն է հայոց 626 թ. (մեր թվականության 1177-ին), որին և հաջորդել է դավադրությունը նույն թվականին: Քննենք այդ հարցերը: Նախ պարզենք № 5602 ձեռագրի գրության ժամանակին վերաբերող տոմարական չորս զուգահեռները: Վերցնելով հիշատակարանի առաջին երեք տվյալը՝ ստանում ենք՝ 627+551=1178, Հովհաննես Սարկավագի՝ 94+1084=1178, մեր թվականության 1179: Այստեղ կարծես առկա է մեկ տարվա տարբերություն: Սրանցից որն է ճիշտ՝ հայոց 627, թե՞ մեր թվականության 1179 թվականը: Իրականում այստեղ սխալ չկա: Դ. Քոբայրեցին տոմարական այս հաշվի մեջ հետևել է շարժական տոմարին, դրա համար էլ Մատենադարանի № 5602 ձեռագրի գրության հայոց 627 թվականը ընկնում է մեր թվականության 1178 թվականի փետրվարի 5-ից[6] մինչև 1179 թվականի փետրվարի չորսը:

Այսպիսով Դ. Քոբայրեցին հայկական և մեր թվականության տարեթվերը համադրելիս կարող էր մեկ տարվա տարբերությամբ նշել միայն այն դեպքում, երբ Մատենադարանի վերոհիշյալ ձեռագրի գրությունը ավարտվեր 1179 թ. հունվարի 1-ից հետո

---

[1] Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 162:

[2] «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց», էջ 194:

[3] Հիշատակարանի այս մասն օգտագործել են կամ հիշատակել Դ. Հովսեփյանը (տես «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ», մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 5—6, 21 և Ս. Երեմյանը («Մահկանաբերդի Արծրունիները» — անտիպ): Այս հիշատակարանը 1951 թ. հրատարակվեց Գ. Հովսեփյանի «Հիշատակարանք» ժողովածուում:

[4] «Պատմութիւն տանն Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 383—390:

[5] «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 170—171: Վրաց աղբյուրներից 13-րդ դարի Անանունը, բավական համառոտ, նույնպես արձանագրել է այս դեպքերը (պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Բ., Երևան, 1936, էջ 10—11). նույնը տես Brosset M., Histoire de la Georgie, St. Petersbourg, 1850, Iere partie, IIe livraison, pp. 398—399:

[6] Ed. Dulaurier, Recherches sur la chronologie armenienne, tome Ier, Paris 1859, p. 386:

մինչև նույն թվականի փետրվարի 4-ը[1]։ Նշանակում է մոդոված դրել են հայոց 627 թ. իսկ այդ թվականը, ինչպես վերևում տեսանք, շարժական տոմարի դեպքում հիմնականում ընկնում է 1178 թ. մեջ։ Սրդյոք այս թվականը պետք է նկատի ունենանք, երբ Քորայրեցին գրում է «Նախքան զայս միով ամաւ խաւարեցաւ արեգակն», այսինքն 1177 թ.։ Կարծում ենք ոչ, որովհետև 1177 թ. (հայոց 626) արևը խավարել է ոչ թե ապրիլին, այլ մարտի 31-ին և սեպտեմբերի 23-ին[2], այն էլ մասնակիորեն, և չէր դիտվել Հայաստանի սահմաններում, երկրորդ՝ Նոր կիրակին, որը սովորաբար Զատիկից մեկ շաբաթ հետո է լինում, 1177 թ. ընկնում է մայիսին (Զատիկը՝ ապրիլի 24-ին). մինչդեռ արևի լրիվ խավարումը տեղի է ունեցել 1176 թ. (հայոց 625) ապրիլի 11-ին և հենց այդ օրն էլ իրոք Նոր կիրակի է եղել։ Այս հաստատում է նաև Անանուն մի ժամանակագիր. նա գրում է, որ 1176 թ. «խաւարեցաւ արեգակն ի Նոր կիւրակէին ի մետասանն ապրիլի, յերկրորդ ժամու, մինչ աստեղք երևեցան (№ 1737, էջ 69բ)։ Ուրեմն Դ. Քորայրեցու խոսքը 1176 թ. ապրիլի 11-ի արևի լրիվ խավարման մասին է, որ նախորդել է դավադրության մեկ տարով։

Այսպիսով Դ. Քորայրեցու հաշիվներով ստանում ենք՝ 1. Մատենադարանի № 3602 ժողոված-ի գրությունը ավարտվել է մինչև 1179 թ. փետրվարի 4-ը. 2. Արևի լրիվ խավարումը տեղի է ունեցել 1176 թ. (հայոց 625) ապրիլի 11-ին և Դ. Քորայրեցին էլ նկատի է ունեցել այս թվականը։ 3. Օրբելիների դավադրությունը տեղի է ունեցել արևի խավարման հաջորդ տարին, այն է 1177 թ.։ Դավադրության ժամանակը կարելի է կոնկրետացնել, եթե նկատի ունենանք հետևյալը. Սա. Օրբելյանը դավադրությունը ևս նշում է հայոց 626 թ.։ բայց որովհետև տոմարական հաշիվների մեջ նա հետևել է անշարժ տոմարին, (այդ ցույց կտանք ներքևում), այդ պատճառով էլ հայոց 626 թ. ընկնում է 1177 թ. օգոստոսի 11-ից մինչև 1178 թ. օգոստոսի 10-ը։

Ուրեմն, հայոց 626 թվականը 1177 թ. մեջ ընկնում է օգոստոսի 11-ից մինչև դեկտեմբերի 31-ը (մոտավորապես չորս և կես ամիս)։ Այստեղից էլ դժվար չէ հետևեցնել, որ դավադրությունը տեղի է ունեցել այդ ժամանակ, այսինքն 1177 թ. աշնանը։

Այժմ դավադրության պատճառի մասին։ Այս հարցում Ստ. Օրբելյանի հավաստիացումը ճիշտ չէ։ Համաձայն նրա, դավադրությունն պատճառը եղել է վրաց թագավորական գահի նկատմամբ Դավիթ 3-րդի որդու, Դեմետրի (Ռեմնա) ժառանգական իրավունքների

---

[1] Իսկ ինչ վերաբերում է հիշատակարանի հատվածի հռոմեական 498 թվականին, ապա այստեղ դժվարություն ունի 98 տարվա անճշտություն։ Բնագրում ասված է. «Իսկ Հռոովմին շրջանի չորէք հարիւր ինանսուն և ութ էին բովանդ[ակ]ութիւնք ամաց». ըստ այսմ կստանանք 1277 թ. (248—1+532+498)։ 1277 թվականը բացահայտ սխալ է, ուստի բնագրի 498 թվականը կառաջարկեինք սրբագրել 400. ըստ այնմ կստանանք 1179 թ.։ Թե մեր այս ենթադրությունը ճիշտ է, ցույց է տալիս հետևյալ օրինակը. Մատենադարանի № 3497 ձեռագրում (19-րդ դարի ընդօրինակություն), պահվել է 1184 թ. մի հիշատակարան, որտեղ գտնում ենք տոմարական հետևյալ դուդահեռը. «Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրոդուքեան եղև ի թուականութեանս հայոց ՈԼԳ և շրջանին երթալոյ ի բաց ՃԱ. որ կոչի փոքր, իսկ Հռոմին ՆԵ...» (էջ, 36բ. հմմտ. Ed. Dulaurier. Recherches sur la chronologie armenienne, tome Ier, Paris, 1859 pp. 191—192)։

Համաձայն Դյուլորիեի (էջ 192) հռոմեական ՆԵ (405) թվականը համընկնում է մեր թվականության 1184 թվականին (248—1+532+405=1184-ի)։ Հետաքրքրվողների ուշադրությունը հրավիրում ենք այս բանաձևի վրա, որտեղ հռոմեական 405 թվականը եթե համընկնում է մեր թվականության 1184-ին, ապա Դ. Քորայրեցու հիշատակարանը, որը գրվել է 1184 թ. 5 տարի առաջ, 1179 թվականին, ինչպես կարող էր հռոմեական թվականի համեմատությամբ տալ 98 տարվա տարբերություն։ Այստեղից էլ 1184 և 1179 թվականների 5 տարվա տարբերությանը պետք է համապատասխանի հռոմեական 405 և 400 և ոչ թե 498, ինչպես հիշատակարանումն է, թվականների տարբերությանը, այսինքն՝ 405—5=400. ուստի բնագրի 498-ը պետք է ուղղել 400։

[2] „Canon der Finsternisse." von Hofrath Prof. Th. Ritter v. Oppolzer [„Denkschriften der Kaiserischen Akademie der Wissenschaften. Mathematisch=Naturwissenschaftliche Classe, Zweiundfünfzigste Band], Wien, 1887, էջ 228:

[3] Նույն տեղում, էջ 228։

պաշտպանությունը, որն իբր թե ստանձնել էին Օրբելիները[1]։ Դավաճանության պատճառի այս վերսիան վաղուց ի վեր, իրավացիորեն կասկածանքի է ենթարկվել։ Իրականում այդ ապստամբությունն ավելի խորը պատճառներ ուներ։ Այդ ֆեոդալական կենտրոնախույս ուժերի պայքարն էր ընդդեմ թագավորական ուժեղացող իշխանության։ Այդ դավաճանության նպատակն էր թուլացնել թագավորական իշխանությունը։ Դա մի երևույթ էր, որ հանդես եկավ 12-րդ դարի 50-ական թվականներից մինչև Թամար թագուհու կառավարման առաջին տարիները, երբ Վրաստանում, այդ ժամանակ, ֆեոդալական կենտրոնախույս ուժերի իշխանության հաշվին հզորանում էր ֆեոդալական միապետական իշխանությունը՝ «կարգի իշխանությունն անկարգության մեջ» (Էնգելս)։

Հակառակ Ստ. Օրբելյանի, Դ. Քոբայրեցին այս առումով բավական պարզ է գրում. «Զի վրան թագաւորին երկփեղկեր և նոյնհետայն դապստամբութիւն խոկաին մեծամեծքն Վրաց աշխարհին ի թագաւորէ անտի, զոր ի վաղուց յետէ երկնէին և դտեալ դիպող ժամ իւրեանցն հնացեալ չարախոհութեան, առնուն հրապուրանաւք առ ինքեանս զեղբաւրորդի նորին թագաւորի անուանեալըն Աւրբէլք...» (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։

Սակայն այն հանգամանքը, որ Դեմետրը ևս մասնակցել է դավաճանությանը, չի արդարացնում Ստ. Օրբելյանի վկայությունը, թե իրենք և վրաց խոշոր ֆեոդալների մի մասը ապստամբել են Դեմետրի ժառանգական իրավունքները պաշտպանելու համար, ընդհակառակը, նրանք դավաճանություն կազմակերպել են իրենց ժառանգական իրավունքները պաշտպանելու համար, ձգտելով Դեմետրի իրավունքների պաշտպանությամբ քողարկել դավաճանության բուն պատճառը։ Վերջին հաշվով խոշոր ֆեոդալները, առաջին հերթին Օրբելիները՝ Իվանե Օրբելին, որի աղջկա հետ ամուսնացած էր Դեմետրը, իրենց նպատակը կարող էին իրականացնել Դեմետրի նման երիտասարդ և անփորձ թագավոր ունենալու դեպքում, երբ նրանք կկարողանային Դեմետրին խաղալիք դարձնել իրենց ձեռքում։ Որ Ստ. Օրբելյանի վերսիան միակողմանի է, այդ երևում է նաև նրանից, որ Օրբելիները, ինչպես հաղորդում է Մխիթար Գոշը, մասնակցել են Դեմետրի հոր՝ Դավիթ 3-րդ թագավորի թունավորման գործին[3]։ Ասել է թե, դարձյալ պայքար թագավորական իշխանության դեմ։ Դավաճանության պատճառի Ստ. Օրբելյանի վերսիան իր նախնիների քաղաքական վարքագծի պաշտպանության անհաջող փորձ է։ Դրանով նա ձգտել է դավաճանության պատճառի գոյություն ունեցող այլ վկայությունները[4] կամ տեսակետները մերժել, որոնք ընդհանուր և անորոշ ձևով հիշելուց հետո Ստ. Օրբելյանն եզրափակում է. «ամենեքին սուտ են և որպէս դշուն հաչեն»[5]։

Աչքազրավ են նաև դավաճանությունը խնամքով նախապատրաստելու տվյալները, որոնք նախ և առաջ վերաբերում են դավաճանության ծավալին։ Դ. Քոբայրեցին գրում է. «դապստամբութիւն խոկաին մեծամեծքն Վրաց աշխարհին»։ Ստ. Օրբելյանը ևս հաստատում է ժամանակակցի այս վկայությունը. «Եւ էին միաբան ամենայն գլխաւորք և ազատք Վրաց ընդ Իվանէի և ամենեքեան համագունդ դիմեալ եկեալ էին առ նա յԱգարակն[6]...», որոնց զորքի ընդհանուր թիվը անցնում էր 30.000-ից[7]։ Բացի սեփական ուժերից, դավադիրները, ինչպես հաղորդում է Դ. Քոբայրեցին, Գեորգի 3-րդի դեմ են հանել նաև թագավորության սահմանակից մանր իշխաններին. «և որք ի կողմանս Շաքւոյ և Հերեթւոյ և Կախէթոյ իշխեցողքն դաշամբք բանից ապստամբեն և նոքա ի թագաւորէն

[1] Ստ. Օրբելյան, էջ 380–381, 383, 390։

[2] Մանրամասնությունները տես ակադ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմություն, գիրք 2-րդ, Թբիլիսի, 1918, էջ 213, ծանոթ. 2 (վրացերեն)։ Հմմտ. Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն Ա, էջ 5–6։

[3] «Հայապատում» Բ, էջ 389։

[4] Վարդան Արևելցին վկայում է (էջ 170), որ Օրբելիները մտադրություն են ունեցել սպանել Գեորգի 3-րդ թագավորին, իսկ վրաց աղբյուրները այդ մասին ոչինչ չեն գրում (տես Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Բ, էջ 10–11)։

[5] Ստ. Օրբելյան, էջ 390։ Նա այսպես է գրում. «Սմանք գրաբանեն զնոսա եթէ անձանց խոկալով փառս՝ կամեցան ինքեանց առնուլ զթագաւորութիւնն», (էջ 389–390)։

[6] Ստ. Օրբելյան, էջ 381, տես և հմմտ. Վարդան Արևելցի, էջ 170։

[7] Նույն տեղում, էջ 384։

և ամրոցսն յիւրեանցսն ի գերփութիւ առնեն սահմանակից գաւառաց թագաւորին»։ Ավելին, Դ. Քորայրեցին վկայում է, որ այն ժամանակ, երբ զավթիչները պաշարված էին Լոռու բերդում, Գանձակի աթաբեկի մոտ ուղարկել են Լիպարիտ Օրբելուն և նրա որդիներին «ձեռնտու լինել զաւրու կամ ինքեան իսկ գալ ընդ նմա փախստական առնել զթագաւորն և յինքեանս դրաւել զտէրութիւնն»[1]։ Իսկ Ստ. Օրբելյանի վկայությամբ Լիպարիտ Օրբելին Գանձակի աթաբեկի 60 հազար օգնական զորքով գալիս է եղբոր օգնությանը[2]։ Հայկական աղբյուրները լռում են, բայց վրաց աղբյուրներից 13-րդ դարի Անանունը հաղորդում է, որ զավթիչներն օգնության էին դիմել, բացի Գանձակի աթաբեկից նաև Ալաթում հաստատված Շահիարմեններին[3]։ Սույն փաստերից պարզվում է, թե Օրբելինների դավադրությունն եղել է խնամքով կազմակերպված և մեծ վտանգ է ներկայացրել։

Այս դեպքերի առթիվ Դ. Քորայրեցին տալիս է մի կարևոր ուղղում։ Վրաց պատմագիրը ինչպես և Ստ. Օրբելյանը՝ հաղորդում են, որ Լիպարիտ Օրբելին գնաց Գանձակի աթաբեկ Էլդիկուզի մոտ, նրանից օգնություն խնդրելու, մինչդեռ ըստ Դ. Քորայրեցու Լիպարիտը գնացել է «առ զաւրավարն Պարսից Ադիլ...»։ Այստեղ իրավացի է Դ. Քորայրեցին, որովհետև ինչպես հայտնի է, 1177 թ. դավադրության ժամանակ Գանձակի աթաբեկ Շեմս-ադ-դին Էլդիկուզը մահացած էր։ Նա մեռել էր 1172 թ.[6] և նրան հաջորդել էր ավագ որդին Մուհամմեդ Փեհլևան Ջեհանը (իշխել է 1172—1186 թթ.[7])։ Իսկ բնագրում հիշված «Ադիլ»-ը Էլդիկուզի կրտսեր որդի Ղզլ Արսլան Օսմանն է, որը 1177 թ. դավադրության ժամանակ ոչ թե աթաբեկ էր, այլ զորքերի հրամանատար. այդ պատճառով էլ Դ. Քորայրեցին նրան կոչում է «զաւրավարն Պարսից»։

Ղզլ Արսլան Օսմանն որպես աթաբեկ հաջորդեց եղբորը՝ Մուհամմեդ Փեհլևան Ջեհանին, 1186 թ. և սպանվեց 1191 թ. սուլթանի տիտղոս ընդունելուց հետո[8]։

Մյուս կարևոր հարցը վերաբերում է այն բանին, թե դավադիրների հիմնական ուժերը երբ են եկել Լոռու բերդը պատսպարվելու և վրաց թագավոր Գեորգ 3-րդը երբ է գրավել այն։ Այս կարևոր հարցի մասին Դ. Քորայրեցին իր հիշատակարանում, դժբախտաբար ոչինչ չի հայտնում, մինչդեռ Ստ. Օրբելյանը որոշակիորեն գրում է. «Եւ զի յերեքտասանն հրոտից ամսոյ եմուտ Իվանէ ի Լոռէ և եկաց մինչև ի հինգն մեհեկի»[9]։ Մենք չգիտենք, թե Ստ. Օրբելյանի այդ տեղեկությունը ինչքան հավաստի է, սակայն, պարզենք տոմարական այս հաշիվը։ Հ. Սարկավագի անշարժ տոմարի[10] համաձայն հայոց 626 թ. սկսվում է 1177 թ. օգոստոսի 11-ից և տևում մինչև 1178 թ. օգոստոսի 10-ը։ Նշանակում է հայոց 626 թ. նախավերջին, հրոտից ամիսն ընկնում է 1178 թ. հուլիսի 7-ից մինչև օգոստոսի 5-ը, այստեղից էլ հրոտից ամսի 13-ը համապատասխանում է 1178 թ. հուլիսի 19-ին։ Իսկ հայոց 626 թվականի մեհեկան ամիսը (հայկական 7-րդ ամիսը) անցել էր երբ Իվանե Օրբելին յուրայիններով մտավ Լոռու բերդը. հետևապես բնագրում խոսքը վերաբերում է հաջորդ (հայոց 627, մեր թվականության 1179) տարվա մեհեկան ամսուն, որը ընկնում է 1179 թ. փետրվարի 7-ից մինչև մարտի 8-ը. այստեղից էլ մեհեկան ամսի 5-ը համապատասխանում է 1179 թ. փետրվարի 11-ին։

---

1 Հմմտ. Ստ. Օրբելյան, էջ 385։

2 Նույն տեղում, էջ 390։

3 Հ. Մ ե լ ի ք ս ե թ - Բ ե կ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Բ, էջ 10—11։

4 Նույն տեղում, էջ 11։

5 Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 385, 390. Վարդան Արևելցին ավելի ճիշտ է գրում, թե «չոգաւ ի Պարսից կողմն», էջ 170։

6 С. Л э н-пуль, Мусульманские династии, СПБ., 1899, էջ 144։

7 Նույն տեղում, էջ 144։

8 Նույն տեղում, էջ 144, ծանոթ. 1։

9 Ս տ. Օ ր բ ե լ յ ա ն, էջ 386։

10 Նկատի ունենալով Ստ. Օրբելյանի «և էր կատարումն սրբոյ Ստեփաննոսի ի թուականութեանն հայոց 184, ի հրոտից ի 15 և յուլիսի 21....» (էջ 143) վկայությունը, որի մեջ հայոց 184 թ. հրոտից 15-ն անշարժ տոմարի դեպքում միայն կհամապատասխանի մեր թվականության 736 թ. հուլիսի 21-ին, եզրակացնում ենք, որ տոմարական [illegible] հաշիվներում էլ Ստ. Օրբելյանն առաջնորդվել է անշարժ տոմարի հաշվով։ Այդ պատճառով էլ մենք մեր հաշվումների համար հիմք ընդունեցինք անշարժ տոմարը։

Այսպիսով, Իվանե Օրբելին զավադիրների մի մասի հետ, ապաստան գտնելու նպատակով, Լոռու բերդը մտել է 1178 թ. հուլիսի 19-ին և Գեորգի 3-րդ թագավորին անձնատուր եղել 1179 թ. փետրվարի 11-ին, այնտեղ մնալով մոտավորապես 7 ամիս։

Դ. Քորայբեցու հիշատակարանը հնարավորություն է տալիս ճշտելու զավադիրների մի մասի, որոնք Լիպարիտ Օրբելու հրամանատարությամբ ջանում էին ամրանալ Կայան բերդում, և Գեորգի 3-րդի հավատարիմներից մեկի՝ Թրիլիսիի ամիրայետ Քրդի զորքերի ճակատամարտի վայրը։ Այդ մասին Դ. Քորայբեցին գրում է. «Եվ եղբայր Նորին (Իվանե Օրբելյանի—Վ. Հ.) Լիպարիտ իւրովքն ժողովով և յարտաքուստ միարանեցելովքն ասնուզարդի թագաւորին գԴէմետրէ և զիմէ յանմատոյցն Կայան, որոց գհետամտեալ հրամանաւ թագաւորին բարեպաշտ ամիրայէտն Տփխեաց, Քուրդ անուանեալ, հասանէ ի կիրճս ճանապարհի նոցա, յիւր սեփհականն զաւառն Մահկանաբերդն կոչեցեալ, հարկանէ զէմ յանդիման նոցա զաւագափոգն պատերազմի և ի փախուստ ընդ կրուէին զարձուցանէ։» Այս հատվածից երևում է, որ ճակատամարտը տեղի է ունեցել նախքան Լիպարիտ Օրբելու Կայան բերդ հասնելը, Մահկանաբերդի շրջանում, որից հետո Լիպարիտ Օրբելին և հեծյալ զորքի մի մասը փրկվում են ջախջախումից և զավադիրների մյուս խմբի հետ ամրանում Լոռու բերդում։

Ինչպես տեսնում ենք, Օրբելիների զեկավարած 1177—1179 թթ. զավադրության կապակցությամբ վերևում առաջադրված մի շարք հարցերի լուսաբանման համար մեծ կարևորություն է ստանում Դ. Քորայբեցու ոսյն հիշատակարանը, այդ պատճառով էլ ստորև հրատարակում ենք, նշելով տողատակ բնագրին անհրաժեշտ մի քանի ծանոթագրություններ։

* * *

268բ Ջաւրայուցանոգին տկարաց Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ փառս վեր ասաքեսցի զոհացողական ձայնիւ յաւարտման գծիս, ի Դաւթայ աղերսողէ, որ աչխատեցայս ի յարմարումն ստորագծութեանս, յոր երկիւղիւ մերձելով ի սկսումն, զուցէ ոչ բաւեցից տոկալ հասանել յայս գիծ, սակայն ժամանեցոյց, որ տայն իմաստս և
269ա զաւրութիւն, որ և զմեռեալս կենդանագործէ, և զայ || լսն հրաշակերտս ի պատիւ և ի փառս մեծագործութեան իւրոյ, որում ընդ մերումս զոհացողական ձայնի համանդամայն յամենեցունց, յերկնաւորաց և յերկրաւորաց փառս սուրբ առաքեսցի, հաւր ամենակալի, և որդւոյ նորա միածնի և փառակցի, և ամենասուրբ հոգւոյն արարչակցի և իշխանակցի, յանսպառ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ցորնախոնջ ջանիւ ի յոլովից բնեալ իմաստնոց զդիրսս զայսոսիկ զեղձամբ սրտի ի գիւտս ճշմարտին մտաց և ի վերջէ հանդիպեալ իմ միւսոյ իմաստնացելոյ ի նոյն կրթութիւն, որ ի մէնջ իսկ սորին բղձիւ ընթացեալ էր միրձ ի սահմանս Աստուծոյ և կիւղիկեցւոց. Վարդան մակձայնեցելոյ, որոյ յոլով ժամանակս ի սակս բնուչեան զեղերեալ առ զրան մէջի իմաստնոյ տեառն Ներսէսի Հայոց վերադիտողի, յորմէ մինչ եհասն առ մեզ, վերստին տեղեկացեալ իմ առ ի հասատութիւն և ի լրումն առաջնոցն կրթութեանց, վստահ եղեալ հավանութեամբ Նորին և այլոցս իմաստնոց, ձեռն ի գործ արկի ի մասնաւորս տարացոյց, մեկնութեան գրոցս ե-
269բ կոցունց մեծին սոփեստոսի Դրիգորի Աստուածաբանի, || այնմիկ, որոյ սկիզբն ի ծնունդն Քրիստոսի, խորին իմաստիւք ասացեալ և ոյք յայլ տնաւրինականսն տեառն. և մինչև ևս Աստ որս բանիւն են պաճուճեալք, ի-բաւարարութեամբ ընդդիմութիւն Ունոմիանոսացն և այլոցն չար ազանդից, զորս ըմբերանելով հաստատէ զհաւատոցն բան, մեծաւ աշխատութեամբ յաստուածաբանական տարրութիւնս, ընդ որում և զկարգաւորութիւն արարածոցս ցուցանէ ի սահմանս իւրաքանչիւր. իսկ զմարդ միայն յարտասահման ընթացս, ընդ որում և զխաղաղութիւնն բարիս աւարտ ամենայնի ցուցանէ։ Արդ որ[1] ի մէնջս աշխատութիւն, տարացոյց միայն է իմաստնոց, բանդի և ոչ մարթ իսկ և վայելուչ էր աւելի քան զայս լինել, զի մի առանց աշխատութեան որ վստահացի, անուամբ միայն իմաստուն ցուցանել սովաւ, այլ առ ընդդէմ դիցէ զրնագրեալսն յիմաստնանալն, և ծանիցէ հանդէպ Նորին զմեկնութիւնն։ Զի թէպէտ և տարորոշեալ է մեր զմեկնութիւնն ի բնաբանէ անտի, սակայն ի բացում տեղիս վերաշրջութիւն ոլորակ բանիցն ի մեկնութեան համարի եղեալ է։ Ու է զի սկիզբն ճառիցն պատճառաց բովանդակ դաւրութիւն ճառեցելոցն

[1] Վարդան Հաղբատեցի, Դավիթ Քորայբեցու ուսուցիչը։

270ա ի սուղ բանան ներսփակեալ է ‖ և երկու կէտիւրն որ ի միջոցի տանցն, իմայ դտաբորոշումն ընարանին և մեկնութեան. և յայսպէսն աւկտութեան անմեղադրութիւն մերոյս յանդգնութեան հայցեմ. և աղաւթս ձիգս ինձ աշխատողիս և յորոց վարժեցայն։ Զի թերեւս ողորմութիւն դոցուր յառաջաձիրն պարգևողէ զթողութիւն սխալանաց և դհանդիպումն մեծին իմաստութեան սեղանոյ, զոր այժմ հայիւաւ և աւրինակաւ տեսանեմ, իսկ յայնժամ զրովանդակն՝ ըստ Առաքելոյ։ Որում հաղորդիցիր և դուք, որք զեկերիրդ յայսոսիկ երկս և ի միասին վայելեսցուք յոր կայն և պահի ամենայն յուսով ակն ունողաց յանճառելիսն բարիս։ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր ի ճշմարիտ ապրեցելոցն կեանս և խնդութիւն, որ է աւրհնեալ ընդ հաւր և ընդ ամենասուրբ հոգւոյն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Արդ՝ եղև շարադութիւն այսր տասի մեկնութեան յամի Ա-որդի և եւթան ասն բսանիւ թուականութեան հայ ազնեան բրոնիկոնիս, իսկ նորոյս շրջանի ինն-նի և չորից, և ի կենարարին մերոյ ծնրնդենէ հազար և հարիւր եւթանասուն և ինն էին ամացն շրջագայութիւնք, իսկ Հռոմայեցոցն շրջանի չորէք հարիւր ինսուն և ութ էին բովանդ(ակ)ութիւնք ամաց։

270բ ‖ Նախքան զայս միով ամաւ խաւարեցաւ արեգակն յապրիլիոս ամսոջ, ի նորում կիւրակէին, յառաջնումն ժամու և նշանք յետ այսր ցուցան շփոթմանս։ Զի վրան թագաւորին երկիւղկեր և նոյնհետայն զապստամբութիւն խոկային մեծամեծքն Վրաց աշխարհին ի թագաւորէ անտի, զոր ի վազուց յետէ երկնէին. և զտեալ զիպող ժամ իւրեանցն հնացեալ չարախոհութեան, առնուն հրապուրանաւք առ ինքեանս զկրաւորդի նորին թագաւորի անուանեալսն Ուրբէլ։ Իսանէ սպասարար և Լիպարիտ եղբայր իւր որդւովք և ազգականաւք իւրեանց և ընդեալ յԱգարակ[1] զղեակ, թագաւորէցուցանէն. որպէս թէ ոչ որ ձեռնհասիցէ զեղեալ զնոցայն զործ, որպէս խոհականնաք ի Տոփել ի հնուն Յարեսադովմայն իւրս յուսալով, յամուր զղեակս իւրեանց ամրոցաց և յնտանեաց և յայլոց խորհրդոցայն յոյովութիւն, զորոց միտս յինքեանս յանկուցանեն. նախ իւրեանցն զաւառականաւք և ամրականաւք զանառիկն Կայան- և զկայծոն[2] հանդեալ նմին պայմանեն ի ընակչաց անտի ձեռնտու սոցա լինին և որք ի կողմանս Շարեոյ և Հերեթեոյ և Կախէթեոյ ‖ իշխ-

271ա ողքն զաշամբք բանից ապստամբեն և նորա ի թագաւորէն և ամբանան յիւրեանցորն և զերփու�առնեն սահմանակից զաւառաց թագաւորին։ Եւ սորա յայսմ կողմանէ նոր թագաւորաւն առնուն զթագաւորանիստ զեաւղ, որ այսն[4] Պարապով. և առաքեն յամենայն խորհրդականսն անդր զումարել, զի փախստականիցեն զթագաւորն կամ ընդ բռամբ ածիցեն։ Իսկ նա վասն զի տակաւին ընդ ձեռամբ ունէր զբաղաքս և զամրոցս սահմանս թագաւորութեան իւրոյ և զգանձարանսն արքունիս, ընթանայ ի մեծ շահաստանն Տփխիս, և ի խորհուրդ միաբանութեան կոչէ զմանրիմս թագաւորութեան իւրոյ և նոցին խորհրդակցութեամբ խոստանայ և բաշխէ զանձս ոսկւոյ և արծաթոյ և հանդերձս պատուականս ըստ արժանի խառնիճանց հետեակ սպառազինացն Դուալեթոյ և ոյք ի սահմանս Քարթլ զաւառի, զորս ի մի վայր զումարեալ զայ հասանէ ի հայրենի զաւառն սպարապետին և յաւարի խաղացուցեալ հրձիգ առնէ զապարանս նոցա և ինքն խաղա հասանէ ի սահմանս

271բ ապստամբացն. զոր ի բացու ‖ սա տեսեալ ապստամբացն զանգիտեալ ի փախուստ զառնային, ամբանալ ուր և զիպեսցի։ Իսկ սպարապետն Իւանէ որդւովքն և կնաւն և ամենայն ազգիւն զայ մտանէ յանասիկն Լաւէ. և եղբայր նորին Լիպարիտ իւրովքն ժողովով և յարտաքուստ միաբանեցելովքն առնու զորդի թագաւորին զԴեմէտրէ և զիմէ յանմատոյցն Կայան, որոց զհետամտեալ հրամանաւ թագաւորին

---

1 Պատմական Ագարակը գտնվում է այժմյան Ստեփանավանի շրջանում։ Հիմա էլ կոչվում է նույն անունով։

2 Կայան բերդը գտնվում է պատմական Գուգարքի Ջորոփոր գավառի Կայենս ձորի մեջ, Հագրատի և Ստանահինի միջև։ Հագրատից մոտավորապես 4 կիլոմետր արևմուտք, մի անառիկ բարձրադիր բլրի վրա, որի ստորոտից հոսում են Դեբեդա և Ժիվանի գետերը։

3 Իմա Շնող գյուղ, այժմյան Ալավերդու շրջանում։

4 Բնագրի «այսն» բառի իմաստն անհասկանալի է, ուստի ենթադրաբար ուղղում ենք «սասեն»։ Եթե ճիշտ է այս, նշանակում է Պարապով թագավորանիստ գյուղի անունն է, որի տեղադրությունը մեզ անհայտ է։

բարեպաշտ ամիրապետն Տփխեաց. Քուրդն անուանեալ. հասանէ ի կիրճս ճանապարհի նոցա. յիւր սեփհականն գաւառն Մահկարերդն կոչեցեալ[1], հարկանէ զէմ յանդիման նոցա զաւադափոդն պատերազմի. և ի փախուստ ընդ կրուկն դարձուցանէ, որոց զհետմտեալ առնու զկահ և զկարասի բանակին. և ձիապուր միայն զերծեալք տասանեն և նոքա ի զգեակն Լաւոէ. և ամենայն ազգ ապստամբացն ի մի վայր գումարին։ Զայս տեսեալ ամբ[ակ]անացն Պայանուոյ գան ի հնազանդութիւն Թագաւորին. և սահմանակիցքն ամենայն, իսկ Թագաւորն զհեղութիւն ի ձեռն առեալ բա-
272ա գում անգամ պատգամս յղեալ, աղաչէ ի ‖ խաղաղութիւն և զնդդիմակն լսէ պատասխանի, որպէս թէ չիցէ հնար տեսանել զնա ի կեանս, այլ միայն թէ զկէս թագաւորութեանն ի նոսա թողցէ, զի Պարապով և ի միւսմէ ևս կիսոյն հանցեն, զոր ոչ յանձն առնու Թագաւորն, թէպէտ և կասկածէր ի զաւրացն երկպառակութենէ, զմահ ի ձեռն առնու։ և ժողովէ զնպանաւ առ ինքն յամենայն կողմանց զկասկածուորս և զանկասկածս և նստի ի վերայ ամուր զդեկին Ագարակոյ, երկուց ամսոց և կիսոյ ժամանակ։ Եվ խուճապէ մենքանայիւք խարխարեալ զպարիսպն և զպարանսն որ ի ներքս, և նեղեալ որք ի ներքսն կային, արք անուանիք ի պատերազմի, ի ժանհոտութենէ զիականցն մարդոյ և անասնոյ, և ի ծարաւոյ, զի և զջրոյն ևս արգելին ճանապարհ և ակամա իջանեն առ նոսա, և տան զդդեակն։ Յետ որոյ յոլովս գումարէ զաւրս Թագաւորն, և գայ նստի ի վերայ ապստամբանոցին Լաւոէոյ[2], և սիրոյ միաբանութեան պատգամաւորս յղէ ի ներքս տալ ցնա զեղբաւրորդի իւր և ինքեանց յանհոդութեան մեալ[3]։ Զայս առնէ բազում անգամ և ոչ հաւանին, զի
272բ նախքան զղալ Թագաւորին առ[աքեալ] ‖ սպարապետին, զեղբայր իւր Լիպարիտ երիւք որդւովք և զիւրն ևս կրտսեր[4] որդի առ գաւրավարն Պարսից Խզիլ, ձեռնտուլինել զաւրու, կամ ինքեան իսկ գալ ընդ նմա փախստական առնել զԹագաւորն, և յինքեանս զրաւել զտէրութիւնն. որ և գումարէ ընդ նմա ըստ խնդրոյն գաւրս բազումս, որք մերձ եղեալ ի սահմանս Թագաւորին. մինչ ականատես բանակին լինել, զանգիտեալ ի բազմութենէն զաղտագողի ընդ կրուկն դառնային։ Իսկ զաւրք Թագաւորին ասպատակ արձակեալ ի վերա Զորագավառի ամրականացն, առնուին զամրոցս բազումս բռնութեամբ և զինչսն յաւարի տանէին մինչև ակամայ ամենեքեան զաին ի հնազանդութիւն, ամրոցաւք և զդեկաւք, և յորժամ յամենայն կողմանց սպառեաց յոյս աւգնականութեան, զի և ազգայինք ևս ուրացեալ զնոսա ի հնազանդութիւն զիմեցին Թագաւորին, որ ասէր զապաւինութիւն յԱստուած ունել և յազաւթս սրբոց, ապա և ինքեանք իսկ նեղեալ և անհնարեալ, երդման միջնորդութեամբ արտաքս ելանէն և դան սեղդեստեալք առ ոտս Թագաւորին, վասն զի նախ եղբաւրորդի Թագաւորին զաղտագողի էջ վանդակաւ ընդ պարիսպն և եկն առ Թագաւորն...»։

---

1 Մահկանարերդի տեղադրման հարցով գրաղվել է ընկ. Ս. Երեմյանը. վերոհիշյալ անտիպ աշխատության մեջ (էջ 21—22)։ Նա հիմք ընդունելով Մատենադարանի № 5254 ձեռագրի հիշատակարանի վկայությունը (էջ 54 բ), կարծում է, որ Խնձորակուտ ձորի ձախ կողմում գտնվում է Դեղձնուտ վանքը, իսկ աջ կողմում՝ Բերդաքար ամրոցի ավերակները (Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 395)։ Ընկ. Ս. Երեմյանը Բերդաքարը նույնացնում է Մահկանարերդի հետ։

2 Ստ. Օրբելյանի համաձայն (էջ 385) Գեորգի 3-րդն Ագարակը պաշարում է ընդամենը 25 օր և այնուհետև գրավում այն։

3 Տես և հմմտ. Ստ. Օրբելյան, էջ 386։

4 Այս բանակցությունների մասին տես և հմմտ. Ստ. Օրբելյան, էջ 386—388։

5 Տես և հմմտ. Ստ. Օրբելյան, էջ 385, Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ր, էջ 10—11։

6 Հմմտ. Ստ. Օրբելյան, էջ 388, Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Բ, էջ 10—11։ Բնագիրն այստեղ ընդհատվում է։